

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2003թ. հունվար-մայիսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2003թ. հունվար-մայիսին կազմել է 371711.9 մլն. դրամ և դրա աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 113.9%` 2002թ. հունվար-մայիսի 109.2 % ցուցանիշի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում բազային ճյուղերի աճով: ՀՆԱ-ի աճի 13.9 տոկոսային կետից 11.8-ը ապահովվել է նշված ճյուղերի հաշվին: Ընդհանուր առմամբ 5 բազային ճյուղերում ավելացված արժեքի արտադրության աճը կազմել է 117.2%, որը 8.3 տոկոսային կետով ավել է ձևավորվել, քան 2002թ. նույն ժամանակահատվածում:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելածի կառուցվածքը		ՀՆԱ-ի կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար- մայիս		հունվար- մայիս		հունվար- մայիս	
	2002	2003	2002	2003	2002	2003
ՀՆԱ, հիմնական գներով	107.8	115.0	6.7	12.8	85.2	86.2
<i>որից՝</i>						
արդյունաբերություն	111.2	118.2	3.3	5.5	30.1	31.6
գյուղատնտեսություն	100.8	103.8	0.1	0.5	14.0	12.9
շինարարություն	118.1	153.5	1.2	3.6	6.7	8.8
տրանսպորտ և կապ	106.8	113.3	0.4	0.7	5.5	5.6
առևտուր և հանրային սնունդ	109.2	112.2	1.1	1.5	12.1	11.8
Ընդամենը, բազային ճյուղեր	108.9	117.2	6.1	11.8	68.4	70.7
Ընդամենը, այլ ճյուղեր	103.6	105.8	0.6	1.0	16.8	15.5
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	117.7	107.4	2.5	1.1	14.8	13.8
ՀՆԱ, շուկայական գներով	109.2	113.9	9.2	13.9	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	2002թ. հունվար- մայիս	2003թ. հունվար- մայիս
ՀՆԱ, շուկայական գներով	100	100
այդ թվում՝		
ապրանքներ	51.0	53.5
ծառայություններ	34.2	32.7
ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	14.8	13.8